

# ՍԱՂՄՈՍ 53\*

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Հիմարությունն ու ամբարշտությունը <u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, երբ. վերնագիրը՝ Մահալեթի եղանակաով, Դավթի մտորումները	Անաստվածների հիմարությունը, և Իսրայելի վերականգնումը	Ցինիկ և անարդար դարաշրջանի դատապարտությունը	Մարդկային ամբարշտությունը	Անաստվածների ճակատագիրը
53:1-3	53:1	53:1	53:1	53:1
	53:2-3	53:2	53:2-3	53:2
		53:3		53:3
53:4-6	53:4-5	53:4	53:4	53:4
		53:5	53:5	53:5
	53:6	53:6	53:6	53:6

\*Այս Սաղմոսը հանդիսանում է Սաղմոս 14-ի գրեթե նույն կրկնօրինակը, բացառությամբ ՅԱՀՎԵ անվան, որը փոխարինվել է *Էշոհիմուլ*: Տե՛ս գրառումներն այնտեղ:

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գրույրը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 53:1-3

<sup>1</sup>Անմիտն ասաց իր սրտում. «Աստված չկա»:

Ապականված են նրանք ու գարշելի անօրենություն գործեցին:

Չկա մեկը, որ բարին անի:

<sup>2</sup>Աստված երկնքից նայեց մարդկանց որդիների վրա,

Որպեսզի տեսնի, թե կա՞րողոք մեկը,

Որ հասկանում է, որ Աստծուն է փնտրում:  
<sup>3</sup>Բոլորը խոտորվեցին, միասին անպետք դարձան.  
Չկա մեկը, որ բարին է անում,  
Նույնիսկ մի հոգի չկա:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 53:4-6**

<sup>4</sup>Մի՞թե անօրենություն կատարողները հասկացողություն չունեն,  
Որ հաց ուտելու պես իմ ժողովրդին են ուտում  
Ու Աստծուն չեն կանչում:  
<sup>5</sup>Նրանք մեծ վախի մեջ ընկան այնտեղ, ուր վախ չկա,  
Քանի որ քեզ պաշարողների ոսկորները Աստված ցրեց:  
Նրանց ամոթի մատնեցիր, քանի որ Աստված անարգեց նրանց:  
<sup>6</sup>Երանի՛ թե Միոնից զար Իսրայելի փրկությունը:  
Երբ Աստված Իր ժողովրդին գերությունից ետ դարձնի,  
Հակոբը ցնծալու է, ու Իսրայելն ուրախ է լինելու:

Այս Սաղմոսը գրեթե նույնն է ինչ Սաղմոս 14-ը, բացառությամբ «ՅԱՀՎԵ» անվան, որը փոխարինվել է «*Էլոհիմի*»: Տե՛ս բացատրական գրառումներն այնտեղ: